էր գնահատում ձեր եկեղեցանվեր ծառայությունները եւ էջմիածնասեր ոգին երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետը: Մեր գահակալության նախընթաց տասը տարիներին Մենք եւս բազում առիթներ ենք ունեցել ուրախանալու «Սուրբ Էջմիածնի Կրոնասեր Տիկնանց Համախմբումի» կյանքի կոչած եկեղեցաշեն գործերով եւ փառաբանելու Բարձրյալն Աստծուն, որ մեր Եկեղեցուն պարգեւել է ձեզ պես հավատավոր ու ծառայասեր դուստրեր: Ձեր գործերով դուք լուսավոր նոր էջեր եք հավելում մեր Եկեղեցու պատմության մեջ եւ հավատավոր ընթացքով Ամենախնամ Տիրոջ օրհնությունը վաստակում ձեր, ձեր ընտանիքների եւ համայն մեր ժողովրդի համար:

...Սիրելինե՛ր, յուրաքանչյուր հոբելյան անցյալը գնահատելու հետ մեկտեղ նաեւ սկզբնակետ է ապագայի գործունեության: Դիսնամյա հոբելյանը խանդավառության ու նոր ներշնչանքների իրավեր է ձեզ՝ հայրենապաշտ եւ եկեղեցասեր ոգու մեջ առավել զորանալու եւ աստվածահաճո նոր նախաձեռնություններով ձեր առաքելությունը զարդարելու համար: «Հաստատուն կացէք ի հաւատս, ժրացարուք, զօրացարուք: Ամենայն ինչ ձեր սիրով լիցի» (Ա Կորնթ. ԺԶ 13):

Հայոց Առաքելահաստատ Սուրբ Աթոռից, Սուրբ Գրիգոր Լուսավորչի Գահից Հայրական սեր ենք բերում ձեզ ու ձեր ընտանյաց անդամներին: Հայրապետիս աղոթքն է, որ Բարձրյալն Աստված Իր Ամենախնամ հովանու ներքո պահպանի «Սուրբ Էջմիածնի Կրոնասեր Տիկնանց Համախմբումը» եւ մշտառաք օրհնությամբ շնորհազարդի ձեզ ամենքիդ՝ պարգեւելով քաջառողջ, երկար կյանք եւ երկնահեղ ամենայն բարիք», - նշվում է Հայրապետական օրհնության գրում:

Սրբազան արարողությունից հետո Նորին Սրբության նախագահությամբ կատարվեց հոգեհանգիստ համախմբումի ննջեցյալ անդամուհիների հոգիների հանգստության համար, ովքեր իրենց կյանքով ու բարի գործերով հավաստեցին իրենց սերն ու նվիրումն առ ժողովուրդն հայոց եւ առ Մայր Եկեղեցին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԻԲԱՆԱՆԻ «ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՐՈՆԱՍԵՐ ՏԻԿՆԱՆՑ ՀԱՄԱԽՄԲՈՒՄԻ» ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Հոկտեմբերի 9-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպեց Լիբանանի «Սուրբ Էջմիածնի Կրոնասեր Տիկնանց Համախմբումի» անդամուհիների հետ, ովքեր եկել էին հրաժեշտ տալու Նորին Սրբությանը:

Վեհափառ Հայրապետը վերստին իր գնահատանքը հայտնեց ներկաներին՝ վստահություն հայտնելով, որ երջանկահիշատակ Վազգեն Ա Հայրապետի հոգին այս պահին ուրախություն է ապրում եւ օրհնում նրանց, որ համախումբ մեկտեղվել են Սուրբ Էջմիածնում եւ տոնախմբում են միության հոբելյանը, որ ստեղծվեց հոգելույս Հայոց Հայրապետի գահակալության շրջանում:

«Գնահատելի է Ձեր նվիրումը, սերը եւ հավատարմությունը հանդեպ Մայր Աթոռ Ս.

Էջմիածինը, որոնք երբեք չեն սասանվել եւ չեն տկարացել: Մշտապես, բոլոր պարագաներում դուք քաջությամբ, լավատեսության ոգով եւ առ Ս. Էջմիածինը հավատով իրականացրել եք ձեր ծառայությունը՝ ջերմ պաշտպանը մնալով Ամենայն Հայոց Հայրապետության եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի»,- ասաց Նորին Սրբությունը՝ նշելով, որ բոլոր սերունդները գնահատանքով պիտի հիշեն Համախմբումի անդամուհիների նվիրյալ ծառայությունը եւ սերը մեր ժողովրդի, Հայոց Եկեղեցու եւ Հայրենիքի հանդեպ:

Իրենց սրտի խոսքն ասացին նաեւ Համախմբումի անդամները՝ շնորհակալություն եւ երախտագիտություն հայտնելով Նորին Սրբության եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգատար վերաբերմունքի եւ ջերմ ընդունելության, ինչպես նաեւ մեկշաբաթյա հագեցած ժամանակացույցի համար:

Այս առիթով Ամենայն Հայոց Հայրապետը նաեւ գնահատանք հայտնեց հիսնամյա հոբելյանին նվիրված միջոցառումների կազմակերպիչ հանձնախմբին՝ գլխավորությամբ Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանի:

«Սուրբ Էջմիածնի Կրոնասեր Տիկնանց Համախմբումի» հիմնադրման 50-ամյակին նվիրված մեկշաբաթյա միջոցառումներն ավարտվեցին Երեւանի Կամերային երաժշտության տանը հոկտեմբերի 8-ին հանդիսությամբ, որի ընթացքում Համախմբումի անդամուհիներին իր գնահատանքի եւ օրհնության խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Հայրապետը, իր սրտի խոսքն ասաց նաեւ ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՐԺՈՒՅԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Հոկտեմբերի 11-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունեց պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Արժույթի միջազգային հիմնադրամի գործադիր տնօրենների պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանի եւ ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Վաչե Գաբրիելյանի:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետն իր գոհունակությունն ու երախտագիտությունն արտահայտեց Արժույթի միջազգային հիմնադրամի տնօրեններին՝ իրենց ջանքերի ու ներդրումների համար համաշխարհային տնտեսության կայուն ընթացքն ապահովելու եւ մասնավորապես Հայաստանին ցուցաբերած օժանդակության համար: Նորին Սրբությունը նրանց գործունեությանը մաղթեց արդյունավետ ընթացք՝ հանուն մարդկության բարօր ու ապահով կյանքի:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետը հյուրերին հակիրճ ներկայացրեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պատմությունն ու առաքելությունը, ներկայիս մարտահրավերները: Քննարկվեց համաշխարհային ֆինանսատնտեսական կացությունը եւ իրականացվող հակաճգնաժամային ձեռնարկները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ